ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"27" մարտի 2026թ. N 720-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի ԹԻՎ 8 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2026 թվականի մարտի 23-ի թիվ 8 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

3/27/2026

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք. Երևան

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« » _____ 2026թ.
N _____ հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

23.03.2026թ. ք. Երևան

2026 թվականի մարտի 23-ին ժամը 14:00-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի
քարտուղար՝ Պ. Գալստյանը
անդամներ՝ Տ. Գասպարյանը
Ա. Խաչատրյանը
Կ. Մկրտչյանը

<u>Օրակարգում՝</u>

1. «Գյումրի-Ողջի-Մեղրաշատ-Բյուրակն» թիվ 07-058 ներմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու հարցը,

2. «Կարեն» ՍՊ ընկերության «Գյումրի-Հառիճ-Նահապետավան» թիվ 07-043 ներմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցը նորով փոխարինելու մասին գրությունը,

3. «Մարինե Պողոսյան» ՍՊ ընկերության «Շահումյան-Վանաձոր» թիվ 05-013 ներմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցները նորով փոխարինելու մասին գրությունը:

<u>Քննարկվեց՝</u>

1. «Գյումրի-Ողջի-Մեղրաշատ-Բյուրակն» թիվ 07-058 ներմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու հարցը,

2.«Կարեն» ՍՊ ընկերության «Գյումրի-Հառիճ-Նահապետավան» թիվ 07-043 ներմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցը նորով փոխարինելու հարցը,

3.«Մարինե Պողոսյան» ՍՊ ընկերության «Շահումյան-Վանաձոր» թիվ 05-013 ներմարզային երթուղու ավտոտրանսպորտային միջոցները նորով փոխարինելու հարցը:

Արձանագրվեց՝

1. ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջի՝ Հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանի հանձնարարությամբ Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կկատարի հանձնաժողովի անդամ Ա. Խաչատրյանը,

2. «Գյումրի-Ողջի-Մեղրաշատ-Բյուրակն» թիվ 07-058 ներմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր ստանալու համար «Մուշ-Արմեն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ավտոբուսները համապատասխանում են ՀՀ կառավարության 03.12.2020թ. թիվ 1994-Ն որոշման 3-րդ կետի պահանջներին:

Որոշվեց՝

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ն որոշման պահանջներով՝

1. «Գյումրի–Ողջի–Մեղրաշատ–Բյուրակն» թիվ 07-058 ներմարզային երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավորապես հատկացնել «Մուշ-Արմեն» ՍՊ ընկերությանը՝ մինչև Շիրակի մարզի միասնական երթուղային ցանցի սպասարկման համար անցկացվող մրցույթում հաղթող կազմակերպության հետ սպասարկման պայմանագրի կնքումը:

Սահմանել հետևյալ փոխադրավարձերը՝

- Գյումրի–Ողջի 200 ՀՀ դրամ,
- Գյումրի–Մեղրաշատ 250 ՀՀ դրամ,
- Գյումրի–Բյուրակն 300 ՀՀ դրամ,
- Ողջի–Մեղրաշատ 50 ՀՀ դրամ,
- Մեղրաշատ–Բյուրակն 50 ՀՀ դրամ,
- Ողջի–Բյուրակն 100 ՀՀ դրամ:

Երթուղին սպասարկել հետևյալ տրանսպորտային միջոցներով՝

Տրանսպորտային միջոցի			
NN ը/կ	մակնիշ	հաշվառման համարանիշ	նույնականացման համար
1.	Գազ Լուիդոր 225000	418 CR 61	X96322133E0769868
2.	Գազ Լուիդոր 225000	976 HR 61	Z7C225000F0006019

2. Թույլատրել «Կարեն» ՍՊ ընկերությանը «Գյումրի-Հառիճ-Նահապետավան» թիվ 07-043 ներմարզային երթուղում շահագործվող «Գազ 322132» մակնիշի 4321L հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցը փոխարինել «Գազ A65R35» մակնիշի 37 MG 018 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցով,

3. Թույլատրել «Մարինե Պողոսյան» ՍՊ ընկերությանը «Շահումյան-Վանաձոր» թիվ 05-013 ներմարզային երթուղում շահագործվող «Գազ 322132» մակնիշի 0544L հաշվառման համարանիշի և «Գազ 32213» մակնիշի 4400L հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցները փոխարինել «Գազ Լուիդոր 225000» մակնիշի 969 CS 61 հաշվառման համարանիշի և «Գազ 322121» մակնիշի 37 EN 613 հաշվառման համարանիշի ավտոտրանսպորտային միջոցներով,

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

քարտուղար՝ Պ. Գալստյան

անդամներ՝ Տ. Գասպարյան

Ա. Խաչատրյան

Կ. Մկրտչյան